


*Սուրբ Խաչ*

*Հայաստանեայց Եկեղեցի*



*Holy Cross*

*Armenian Church*

**1980**

ՍՈՒՐԲ ԽԱԶ ՀԱՅՑ.ԱՌԱՐ. ԵՎԵՂԵՅԻՈՅ

Տարեկան Անդամական ժողով

14 Փետրուար 1981, Շարաթ ժամը 7:00 Զ.Մ.

ՕՐԱԿԱՐԳ

- 1.- Անդամներու արձանագրութիւն
- 2.- Ժողովը կարգի հրահրող կոչ
- 3.- Ներկայութեան ստուգում
- 4.- Բազման աղօթք
- 5.- Ընտրութիւն ժողովի Գիւմնի
- 6.- Օրակարգի իւրացում
- 7.- Նախորդ Անդամական ժողովի ատենագրութեան  
րնթերցում եւ վաւերացում
- 8.- Հոգեւոր Հովիւի տեղեկատուութիւն
- 9.- Ժխական Խորհուրդի տեղեկատուութիւն
- 10.- Յարակից Մարմիններու տեղեկատուութիւն
- 11.- 1980 տարուայ ելեւնտական տեղեկատուութիւն
- 12.- Հաշուերնիչ Յանձնախումբի տեղեկատուութիւն
- 13.- 1981 տարուայ ելեւնտագոյցի վաւերացում
- 14.- Եկեղեցւոյ շէնք
- 15.- Ընտրողական Յանձնախումբի տեղեկատուութիւն
- 16.- Ընտրութիւն ժխական Խորհուրդի, Ընտրողական  
եւ Հաշուերնիչ Յանձնախումբերու
- 17.- Նոր հարցեր
- 18.- Աղօթք եւ իսկուծ

1980 Dues \$  
 1981 Dues \$  
 Total \$  
 Please bring this  
 amount with you.  
 Thank you.

27 Յունուար 1981

Հովիւ եւ ժխական Խորհուրդ

Համեցէք այս օրակարգ ձեր հետ բերել:

2740 Lawrence Ave. E. David & Mary Thomson C.I. ( East of Midland)

HOLY CROSS ARMENIAN CHURCH

Annual Parish Assembly

February 14, 1981, Saturday, 7:00 p.m.

2740 Lawrence Ave. E. David & Mary Thomson C.I. ( East of Midland)

AGENDA

- I.- Registration
- 2.- Call to order
- 3.- Verification of eligible voters
- 4.- Invocation
- 5.- Election of Assembly Officers
- 6.- Adoption of the agenda
- 7.- Reading of 1980 Assembly minutes
- 8.- Report of the Parish Priest
- 9.- Report of the Parish Council
- 10.- Report of the Subordinate organizations
- II.- Financial report 1980
- 12.- Auditing Committee report
- 13.- Adoption of 1981 budget
- 14.- Church building
- 15.- Nominating Committee report
- 16.- Election of Parish Council, Nominating  
& Auditing Committees
- 17.- New Business
- 18.- Adjournment & benediction

27 January 1981

Priest & Parish Council

PLEASE BRING THIS AGENDA WITH YOU.

MEMORANDUM FOR THE RECORD

Subject: [Illegible]

Reference is made to [Illegible]

[Illegible text]

[Illegible text]

[Illegible text]

[Illegible text]

[Illegible text]

[Illegible text]

[Illegible text]

[Illegible text]

[Illegible text]

[Illegible text]

[Illegible text]

Ատենադրուժիւն Ս. ԽԱՀ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովին

Շաբաթ, Փետրուար 23, 1980ի երեկոյան տեղի ունեցաւ Ս. Խաչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ անդրանիկ ընդհանուր անդամական ժողովը, Սիր ժօն Մակտանրլտ Բօլէճիէթ հնսթիթիւթի մէջ:

Ժողովը սկսաւ 7:15ին, 90 հոգիներու ներկայութեամբ, Հոգեշնորհ Տէր Վազգէն Ժ. Վրդ. Քէշիշեանի աղօթքով, որը կը նախագահէր օրուայ ժողովը. Արժանաւոր Տէր Յուսիկ Քահանայ նշանեանի ներկայութեամբ:

Ժողովի անդամներու թիւին օրինաւորութիւնը ճշդելէ վերջ ընտրուեցաւ օրուայ դիւանը հետեւեալ անդամներով:

Պր. Կարօ Խապայեան - Ատենապետ  
Տիկ. Տիանա Հանրմեան - Ատենադպիր  
Օր. Անի Զպուրեան - Ատենադպիր

Օրուայ ժողովի օրակարգը վաւերացուեցաւ ընդհանուր ժողովականներու միաձայնութեամբ, Պր. Մուշեղ Շահնազարի առաջարկով եւ Օր. Անի Քէրամէթլեանի երկրորդելով սոյն առաջարկը:

Ապա հետեւեալ մարմիններու տեղեկատուութիւնները կարգացուեցան ստորեւ յիշուած վարչական անդամներու կողմէ:

Ժխական Խորհուրդ - Տօքթ. Վարդան Այնաճեան  
Ս. Խաչ Ազգ. Ամն. Վարժարան - Տօքթ. Նուպար Ալեանաք  
Տիկնանց Օժանդակ Մարմին - Տիկ. Նոյեմի Քէլէշեան  
Հաշուերննիչ Յանձնախումբ - Տիկ. Շաքէ Շահնազար

Նիւթական Տեղեկատուութիւններ.  
Ժխական Խորհուրդ - Պր. Ղեւոնդ Շահմէլիբեան  
Ս. Խաչ Ազգ. Ամն. Վարժարան - Պր. Ղեւոնդ Շահմէլիբեան  
Տիկնանց Օժանդակ Մարմին - Տիկ. Սօֆի Քուզուեան  
1980 Ելեւմտացոյցը ներկայացուց Պր. Ղեւոնդ Շահմէլիբեան

Պր. Պետրոս Մուշեան խօսք առնելով ամբաստանեց ժխական Խորհուրդը թէ ան շեղած էր իր սկզբնական նպատակէն Յուլիս 14, 1979 թուականէն ի վեր աֆեօս կլլեցնելով անդամներուն եւ անոնք ալ աֆեօս կլլած լուռ նստած էին: Պր. Մուշեան պահանջեց որ բուն ճշմարտութիւնը պարզուի անդամակն ժողովին, մասնաւորաբար ղէպքերը որ տեղի ունեցած էին Ս. էջմիածինի մէջ իրենց այցելութեան ժամանակ:

Պր. Արմէն Քիւրքճեան ընդմիջեց եւ պահանջեց դիւանի առենապետէն որ Պր. Մուշեան ներողութիւն խնդրէ ընդհանուր ժողովէն, ժխական Խորհուրդէն եւ օրուայ դիւանէն, քանի որ վարկաբեկիչ խօսքերով բոլորին արժանապատուութիւնը վիրաւորած էր:

Տիկ. Թեֆոն Քէօշկէրեան խօսք առնելով յայտնեց թէ Ս. էջմիածինի ղէպքերը Պր. Մուշեան ամէնէն աւելի լաւ պէտք էր գիտնար, քանի գազող երեք անձերէն մին հնքն էր:

Տօքթ. Վարդան Այնաճեան խօսք առնելով կարգաց Գատուած մը Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի թիւ 259 Թղթակցութենէն, 2 Ապրիլ 1979 թուականին, որուն մէջ կը յիշուեր հետեւեալը.

Հետեւաբար վեհաօտ Հայրապետի իղձն է եւ որոշումը, որ Թորոնթոյի նոր համայնքի կազմակերպումը եւ ճանաչումը կատարուի նիւ-Շորքի թեմական իշխանութեան տնօրէնութեամբ այժմից իսկ.....

Պր. Մուշեան ուզեց թեմի անջատման հարցը օրակարգի նիւթերուն շարքին աւելցնել: Սակայն Հոգշ. Հայր Սուրբը առարկեց ըսելով թէ օրակարգի վաւերացման ժամանակ այս նիւթը չէր բերած, հետեւաբար հիմա քիչ մը ուշ էր եւ ժողովին օրինաւորութիւնը պիտի խանգարէր:

Այս ծիսական խորհուրդին, Ս. Խաչ Վարժարանին, Տիկնանց Յանձնախումբին տեղեկատուութիւնները եւ 1980 ելեւմտացոյցը միաձայնութեամբ ընդունուեցաւ բոլորին կողմէ:

Դիւանի ատենապետին հրաւերով Պր. Յովակիմ Օլթաճեան Ընտրողական Յանձնախումբի եւ Հաշուեքննիչ Յանձնախումբի կողմէ վարեց օրուայ ընտրութիւնները ըստ կանոնագրի 14 որդ յօդուածին Բ. հատուածին համաձայն: Պր. Օլթաճեան այս առթիւ շեշտեց թէ ծիսական խորհուրդի ընտրուողներու հինգ ամենաբարձր քուէ տաացողները պիտի պաշտօնավարեն 2 տարուան համար, իսկ մնացեալ չորսը 1 տարուայ համար:

220 անդամներ ընտրութեան մասնակցեցան:

Կարճ դադարէ մը վերջ ժողովը կրկին շարունակուեցաւ ուր նոր հարցեր թելադրուեցան հետեւեալ բնոյթով եւ կարգով:

1.- Թեմական Պատգամաւորական ժողովի մէջ կարենալ ներկայացնելու համար կանոնագրի մէջ փոփոխութիւններ առաջարկուեցան ծիսական խորհուրդին կողմէ: Պր. Արմէն Զիւրքճեան կարդաց յօդուածներու այժմու բացատրութիւնները եւ ապա առաջարկուած փոփոխութիւնները: Յօդ. 14, հատ. 12

2.- Գանատայի անջատ թեմի հարց, առաջարկուեցաւ Պր. Ժիրայր Հանըմեանի կողմէ:

3.- Նոր Եկեղեցիի մը հողին կամ շէնքի շինութեան հարց, առաջարկուեցաւ Պր. Պերճ Զրրմըզեանի կողմէ: Պր. Լեւոն Չէօմլէքճեան առաջարկեց շինութեան ֆօնտի մը հաստատուիլը ամբողջացնելով վերի առաջարկը:

4.- Կոմիտաս Երգչախումբի հարց. Պր. Դաւիթ Վարժապետեան յայտնեց թէ բացատրութիւն մը պիտի խնդրեր:

1.- Պր. Արմէն Զիւրքճեանի կողմէ ներկայացուած ծիսական խորհուրդի բերած կանոնագրի մէջ կարգ մը փոփոխութիւններ առաջարկը միաձայնութեամբ ընդունուեցաւ ամբողջական վիճակին մէջ հակիրճ դեր կամ դէմ վիճաբանութիւններէ վերջ:

Յօդուած 13.- բարեփոխեալ ձեւ

Տարեկան ծիսական ժողովը կը գումարուի կանոնաւորաբար տարին մէկ անգամ, Յունուար կամ Փետրուար ամիսներու ընթացքին, եթէ նախկին Տարեկան ծիսական ժողովը տարբեր որոշում մը չէ առած: Մասնաւոր ծիսական ժողովներ կը գումարուին երբ անհրաժեշտ ըլլայ: Տարեկան կամ Մասնաւոր ծիսական ժողովներ կը հրաւիրուին Հովիւին կամ ծիսական Անդամական ժողովի Դիւանին, կամ ծիսական խորհուրդի Ատենապետին կողմէ, ըստ պարագայի, ծիսական խորհուրդի հետ խորհրդակցաբար:

Յօդուած: 14, Հատ. Ա.- բարեփոխեալ ձեւ

Ընտրել Տարեկան ծիսական Անդամական ժողովի դիւանը, ծիսական Անդամական ժողովի կողմէ կայացուելիք ցանկի մը վրայէն: Մինչեւ տարեկան նոր դիւանի ընտրութիւնը նախկին դիւանը պաշտօնի վրայ կը մնայ:

**Յօդուած 15.- քարեփոխեալ ձեւ**

Մասնաւոր ժողովներ կրնան զուտարուիլ նաեւ եկեղեցւոյ քուէատու անդամներուն առնուազն մէկ-երրորդի կամ յիսուն անդամներու գրաւոր դիմումին վրայ, որ պարագան որ կը ներկայացնէ աւելի փոքր թիւը: Դիմումը կը կատարուի հովիւին, կամ ծխական խորհուրդի Ատենապետին կամ Տարեկան ծխական ժողովի ղեկանին, ըստ պարագայի:

**Յօդուած 17.- քարեփոխեալ ձեւ**

Վերոյիշեալ որոշումները պէտք է տրուին զաղտնի քուէարկութեամբ:

**Յօդուած 18.- քարեփոխեալ ձեւ**

Տարեկան ծխական ժողովը կ'ընտրէ ատենապետ մը եւ երկու ատենադպիրներ ներկայ քուէարկողներու մեծամասնութեամբ: Մասնաւոր ժողովներն ալ կը վարէ այս դիւանը: Դիւանի անդամները ծխական խորհուրդի անդամ եւ կամ թեկնածու չեն կոնար ըլլալ:

2.- Պր. Ժիրայր Հանրմեան առաջարկեց որ ընդհանուր ժողովը իւրացնէ Գանատայի անջատ թեմ ըլլալու զաղահարը եւ վաւերացնէ ատենագրութիւններուն անցնելով:

Տիկ. Տիանա Հանրմեան խօսք առնելով շեշտեց թէ հիմա որ ընդունուած էր Ս. Խաչը իբր Հայց. Առաք. եկեղեցւոյ պաշտօնական ծուխ, պէտք էր պաշտօնապէս այս առաջարկը ժողովի բերել եւ ատենագրութիւններուն անցնել:

Հոգշ. Հայր Սուրբը խօսք առնելով յայտնեց թէ մէկ գիշեր առաջ Գերաշնոյ Տէր Թորգոմ Արք. Մանուկեանի հետ հեռաձայնային խօսակցութիւն մը ունեցած էր ուր Թորգոմ Սրբազան յայտնած էր թէ թղթակցութիւն մը դրկած էր Ս. Էջմիածին այս հարցին շուրջ եւ գործը դրական վիճակի մէջ ըլլալով մեր վիճաբանութիւններն անտեղի էին: Առայժմ սպասելէ ուրիշ միջոց չունինք ըսաւ ան:

Պր. Կ. Աւագեան խօսք առնելով առաջարկեց որ ընդունուի Պր. Հանրմեանի առաջարկը որը երկրորդուելէ վերջ միաձայնութեամբ ընդունուեցաւ:

3.- Նոր եկեղեցի գնելու հարցին շուրջ անպաշտօն հանգամանքով բացատրութիւններ տուաւ Տօրթ. Ն. Ճէյլանլը, որը առժամեայ նշանակուած շինութեան յանձնախումբի ատենապետն էր:

Պր. Արմէն Քիւրքճեան առաջարկեց թէ այս հետազօրութիւնները կարենալ շարունակելու համար աւելի ընդարձակ ծաւալի վրայ ընդհանուր ժողովը ծխական խորհուրդին իրաւասութիւն պէտք էր տար պաշտօնապէս սոյն գործին ընդառաջելու համար. որը ընդունուեցաւ բոլորին կողմէ միաձայնութեամբ:

4.- Պր. Դաւիթ Վարժապետեան խօսք առնելով բացատրութիւն մը պահանջեց ծխական խորհուրդէն, ըսելով թէ ճիշտ էր թէ ծխական խորհուրդը որոշում անցուցած էր իր նիստին թէ պատանեկաց պարսիտները միանայմասիս Մշակութային Միութեան, փոխանակ աշխատելու Կոմիտաս Մշակութային Ընկերակցութեան հետ:

Տօրթ. Վարդան Այնաճեան խօսք առնելով ճշդեց թէ իրապէս այդպէս որոշում մը առնուած էր ծխական խորհուրդի Յունուար 21ի ժողովին:

Բաւական երկար վիճաբանութիւններէ վերջ Օր. Նատին Ոսկանեան խօսք առնելով յայտնեց թէ պարսիտներէր ուզեր միանալ որեւէ կազմակերպութեան բացարձակապէս: Կ'ուզէին մնալ անկախ եւ ազատ իրենց որոշումներուն մէջ իրենց ուզած խումբին հետ աշխատելու, բայց կը խօստանային իրենց անդրանիկ ձեռնարկի հասոյթը նուիրել Ս. Խաչ Ազգ. Ամն. Վարժարանին:

Ապա Հոգշ. Հայր Սուրբը խօսք առնելով իր պատգամը եւ հայրական օրհնութիւնները տուաւ ժողովականներուն եւ ծանուցանեց թէ Արժանապատիւ Տէր Յուսիկ

Քհնյ. նշանեան ընդունած էր Ս. Խաչ Եկեղեցւոյ մասյունն հովիւի պաշտօնը:

Կարճ դադարէ մը վերջ Պր. Յովակիմ Օլթանեան կարդաց Ընտրողական Յանձնախումբի կողմէ, ընտրութեան արդիւնքները որոնք հետեւեալներն էին.

Ժխական Խորհուրդ

Sopθ. Կարդան Այնաճեան.....	196	րուէ
Sopθ. Վահէ Սվաճեան.....	188	''
Պր. Անդրանիկ Զազարեան.....	183	''
Պր. Արմէն Քիւրքճեան.....	173	''
Sopθ. Վաչէ Քէրամէթլեան.....	164	''
Պր. Լեւոն Չէօմլէրճեան.....	160	''
Պր. Ժան Ֆէնէրճեան.....	153	''
Պր. Ղեւոնդ Շահլէլիբեան.....	149	''
Տիկ. Շարէ Շահնազար.....	138	''

Թեմական Պատգամաւորներ

Sopθ. Կարդան Այնաճեան.....	189	րուէ
Պր. Սուրէն Էվրան.....	173	''
Պր. Կարօ Խապատեան.....	140	''
Պր. Ժիրայր Հանրմեան.....	127	''

Ընտրողական Յանձնախումբ

Պր. Մակար Քուզուեան.....	179	րուէ
Պր. Յովակիմ Օլթանեան.....	170	''
Օր. Զեփիւռ Ազարեան.....	170	''
Պր. Վահէ Պետրոսեան.....	163	''
Պր. Մուշեղ Շահնազար.....	153	''

Հաշուեքներնիչ Յանձնախումբ



Sopθ. Նորայր Ճէյլանլը.....	179	րուէ
Պր. Վահէ Քէրամէթլեան.....	154	''
Պր. Յարութիւն Սահակեան.....	144	''


Քուէախոյզ մարմնի անդամներն էին հետեւեալները.


Sopθ. Մանուէլ Սարգսիս	Տիկ. Խեփոն Քէօշկերեան
Տիկ. Երջանիկ Չէօմլէրճեան	Պր. Վազգէն Քէրամէթլեան
Տիկ. Մատլէն Օլթանեան	Օր. Անի Քէրամէթլեան
Օր. Յասմիկ Այնաճեան	Պր. Յակոբ Բանտէս
Պր. Կարօ Աւագեան	Տիկ. Սիլվա Քիւրքճեան

Ժամը առաւօտեան 1:45ին վերջացաւ քուէներուն հաշուելու գործողութիւնը:

Հայր Սուրբի պահպանիչով վերջ գտաւ օրուայ ժողովը ժամը առաւօտեան 2:00ի ն:

  
 Անի Չպուրճեան  
 Ատենդաիր  
  
 Տիանա Հանրմեան  
 Ատենադաիր



Կարօ Խապատեան  
 Ատենապետ  


Ս. Խաչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ  
Ծխական Խորհուրդի  
Ատենապետի  
Տարեկան Տեղեկատուութիւն  
1980

Ազնուաւիայլ եւ Համեստաւիայլ Անդամուհիներ,  
Պատուարժան Անդամներ  
Տարեկան Անդամական Պատկանելի ժողովի.

Նախ շնորհակալութիւն կը յայտնեմ անցեալ տարուայ անդամական ժողովին, որ զիս ծխական Խորհուրդի անդամ ընտրեց, ապա ծխական Խորհուրդի գործակիցներու, որոնք ատենապետութեան պատասխանատու եւ պահանջող պարտականութիւնը նուաստիս վստահեցան:

Ծխական Խորհուրդը, 1980 տարուայ ընթացքին 37 հերթական ժողովներ ունեցաւ: 1980 Փետրուարի ընտրութիւններէ վերջ, Առաջնորդարանը երբ ընտրեալները վաւերացուց, 14 Ապրիլին ծխական Խորհուրդի նոր ղիւանը կազմուեցաւ:

Ատենապետ	Արմէն Քիւրքճեան
Փոխ Ատենապետ	Տօթ. Ա. Վարդան Այնաճեան
Ատենադպիր	Տօթ. Վաչէ Քերամեթլեան
Փոխ Ատենադպիր	Ղեւոնդ Շահմելիքեան
Գանձապահ	Շաքէ Շահնազար
Փոխ Գանձապահ	Լեւոն Չէօմլէքճեան
Խորհրդական	Անդրանիկ Զազարեան
Խորհրդական	Տօթ. Վահէ Սվաճեան
Խորհրդական	Ժան Ֆէնէրճեան

Յարակից Մարմիններու կազմութեան տեսակէտով, անցնող տարին կազմակերպչական տարի մը եղաւ: Կազմուեցաւ Տիկնաց Օժանդակ Միութիւնը, Դպրատո Դասը, Երիտասարդաց Միութիւնը եւ Մասիս Մշակութային Յանձնախումբը:

Նկատի ունենալով, թէ այժմու ֆորէստը Կրօվ Եկեղեցւոյ վայրը հանրային փոխադրական միջոցներէ հեռու է, յարմար տեղ մը գտնելու մտօք, Անկլիզան եւ Կաթուղիկ Եկեղեցիներու Թորոնթոյի Առաջնորդարաններուն, Հոգշ. Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեանի միջոցաւ, նա-



մակներ դրկեցինք: Դժբախտարար նոր տեղ մը գտնել կարելի չեղաւ:

Աւագ Շաբթուայ ընթացքին, պաշտամունքներու համար, ստիպուեցանք վարժարանի մը հանդիսասրահը գործածել, ինչոր բաւական անյարմար էր: Այս տարի, Յունաց Ջատիկը տարբեր թուականի պիտի հանդիպի եւ այժմից իսկ կ'աշխատինք Յունական եկեղեցի մը ապահովել:

Վեհափառ Հայրապետի, Մայիսի վերջաւորութեան Միացեալ Նահանգներ եւ Յունիսի մէջ ալ Գանատա այցելութեան կարելիութիւնը կար: Այցելութեան Գանատայի բաժնի յայտագիրը պատրաստելու համար; Առաջնորդի Փոխանորդի նախազանութեամբ, եկեղեցիներու երկուական ներկայացուցիչներով, յանձնախումբ մը կազմուեցաւ: Մի քանի ժողովէ վերջ իմագանք, թէ Վեհափառ Հայրապետը իր շրջապտոյտը յետաձգած էր:

Առաջնորդի Փոխանորդ Հոգ. Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեանի հրաւերով եւ թելադրանքով, քաղաքիս չորս Հայ եկեղեցիները, Ապրիլ 20ին, Եղեռնի օրը, եկեղեցական արարողութեամբ միասնաբար տօնեցին: Ս. Պատարագէ վերջ, Անձանօթ Կինուորի արձանին ծաղկեպսակ մը գետեղուեցաւ:

20 Ապրիլէ վերջ, փոխանորդ Հայր Սուրբը իր պաշտօնէն հեռացաւ: Իր հրաժարման կամ տեղափոխման մասին որեւէ պաշտօնական տեղեկութիւն չստացուեցաւ:

29-31 Մայիսին, ծուխիս պատգամաւորները թեմական Պատգամաւորական ժողովին մասնակցեցան:

29 Յունիսին տարեկան դաշտագնացութիւնը տեղի ունեցաւ: Դաշտին վրայ առաւօտեան ժամերգութիւն կատարուեցաւ: Հակառակ անուպաստօղին, բաւական թիւով ընտանիքներ եկած էին: Հասոյթը զոհացուցիչ էր:

Շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր անոնց, որոնք դաշտագնացութեան պատրաստութիւնները կատարեցին, տեղւոյն վրայ աշխատեցան կամ զանազան ուտեստեղիներով ճաշի սպասարկութիւնը ճոխացուցին:

14 Սեպտեմբեր, վարազայ Խաչի օրով կատարեցինք եկեղեցւոյս Անուանակոչութեան օրը: Շնորհակալութիւն կը յայտնենք ծիսական Խորհուրդի նախկին անդամներուն՝ Տիարք Սուրէն Եվրան, Եղիա Թորոսեան, Մարտիկ Հէքիմեան, Գրիգոր Մազմանեան եւ Յակոբ Քէլէշեան, որոնք իրենց ներկայութեամբ պերճացուցին տօնակատարութիւնը: Ոսկերիչ Պր. Յակոբ Քէմէնչէէքէն այս առիթով խաչեր նուիրեց, որոնք ներկաներուն բաժնուեցան եւ ի պայծառութիւն եկեղեցւոյս, կոկիկ հասոյթ մը ապահովուեցաւ:

Տարուայ ընթացքին անխաբան կատարուեցան եկեղեցական պաշտամունքները, ի բացառեալ 20 Ապրիլ՝ Եղեռնի յուշատուն, 29 Յունիս՝ դաշտագնացութիւն, 17 Օգոստոս՝ Ս. Բաթրինսի մէջ Խաղողօրհնէք, 2 նոյեմբեր՝ Տէր Հօր տարեկան արձակուրդ, 16 նոյեմբեր՝ Ս. Բաթրինսի յիսնամեակ եւ 14 Դեկտեմբեր՝ ֆօրէսդ Կրօվի ծուխը ինքը եկեղեցին օգտագործեց:

9 Ջոյգեր ամուսնացան, 14 երախաներ մկրտուեցան եւ 69 բարեպաշտ հաւատացեալներ հոգեհանգստեան պաշտօն խնդրեցին:

Եկեղեցին այժմ 392 տրատու անդամներ ունի:

Ծուխը թեմական տուրքի ենթարկուելէ վերջ, պահանջուած տուրքի Միացեալ նահանգներ ղրկուելուն Գանատական օրէնքներու համաձայն կարելիութիւնը ստուգելու համար, Եկամուտի նախարարութեան արձանագրեալ բարենպատակ կազմակերպութիւններու քաժնին մօտ դիմում կատարեցինք: Ստացուած պատասխանի համաձայն, ըստ Գանատական օրէնքներու, նիւ Եօրքի Առաջնորդարանին տուրք ղրկել, Ս. Խաչ Հայաստանեայց եկեղեցւոյ գոյավիճակը կրնար վտանգել:

Եկեղեցւոյ շէնք. -

Եկեղեցւոյ շէնքի գնման յանձնախումբը, պատրաստ եկեղեցի մը կամ յարմար հող մը գտնելու համար, Տօթթ. նորայր ժէյլանլըի ատենապետութեամբ, բաւական ջանք տարաւ:

Ֆինչ եւ Վօրտրն պողոտաներու անկիւնը, այրած յունական եկեղեցիի մը շէնքով հետաքրքրուեցանք: Ամբողջ հողին տարածութիւնը 0.9 արտավար էր, ընդարձակուելու տեղ չկար, շէնքին միայն արեւելեան եւ արեւմտեան պատերը կարելի էր օգտագործել ու պահանջուած քանակութիւնը 480.000 տօլար էր: Ի վերջոյ այն եզրակացութեան յանգեցանք թէ՛ անյարմար էր:

Առ այժմ, հանրային փոխադրական միջոցներու ճամբուն վրայ, յարմար տեղ մը չկայ: Յուսալից ենք, թէ յանձնախումբի աշխատութիւնները մօտ թուականի յաջողութեամբ կը պսակուի:

Ենորհակալութիւն կը յայտնենք Տօթթ. նորայր ժէյլանլըի եւ յանձնախումբի բոլոր անդամներուն, որոնք անսպառ ջանքերով ու յարատեւութեամբ հետապնդեցին իրենց վստահուած պարտականութիւնը:

Թեմական Պատգամաւորական ժողով եւ Գանատական թեմ. -

78րդ Թեմական Պատգամաւորական ժողովը, 29-31 Մայիս 1980, գումարուեցաւ Ուաշինկըն Տի. Սի.: Ծուխիս շորս պատգամաւորները՝ Տօթթ. Ա. Վարդան Այնաճեան, Պարոններ Սուրէն Էվրան, Կարօ Խապայեան եւ Ժիրայր Հանրմեան ու Ժիական Խորհուրդի Ատենապետը այս ժողո-

վին մասնակցեցան:

Նախապէս պատրաստուած շրջաբերական մը՝ թեմի կազմութեան պատմականը եւ 1975ի դիմումնագիրը, ներկայ պատգամաւորներուն բաժնուեցաւ:

Ծուխիս պատգամաւորներուն պահանջքին տեղի տալով, Գանատական Թեմի կապակցութեամբ շատ կարճ բացատրութիւն մը տրուեցաւ: Առաջնորդարանը 1979 նոյեմբերին, անձի մը ձեռամբ, Վեհափառ Հայրապետին, առաջարկներու եւ թելադրանքներու թղթածրար մը ղրկած էր, խնդրելով նորին Սրբութեան պատասխանը մինչեւ Ապրիլ 1980: Վեհափառ Հայրապետը չէր պատասխանած: Կաթողիկոսի հաւանութենէն վերջ, թեմը ամէնաշուտ մէկուկէս տարիէն կարելի էր հաստատել:

Հակառակ կրկնակի հարցումներու, Թեմական իշխանութենէն, ղրկուած թղթածրարի պարունակութեան մասին յստակ եւ զոհացուցիչ պատասխան տոնել կարելի չեղաւ:

Վերադարձին, ծիական Խորհուրդը, նամակով մը, Թեմական իշխանութենէն Վեհափառ Հայրապետի ղրկուած թղթածրարի մասին մանրամասնութիւն խնդրեց: Յուլիս 21 թուակիր նամակով մը, մեզի կը տեղեկացուէր, թէ Թեմական Խորհուրդը որոշում առած էր, շատ մօտ տոնէն, Դանատայի բոլոր հայաստանեայց եկեղեցիներուն բացատրութիւն տալ: Մինչեւ այսօր, ոեւէ բացատրութիւն չստացանք:

Ծիական Խորհուրդս, Թեմական Պատգամաւորական ժողովէն ունեցած տպաւորութիւնները, նամակով մը, Վեհափառ Հայրապետին տեղեկացուց:

Առաջնորդարանի 24 նոյեմբեր 1980 թուակիր շրջաբերականէն պաշտօնապէս տեղեկացանք, թէ Վեհափառ Հայրապետը հրահանգած էր Թեմական իշխանութեան որ Գանատական Թեմի կազմակերպչական աշխատութիւնները սկսին եւ այս ուղղութեամբ նորին Սրբութիւնը 15 նոյեմբեր թուակիր կոնզակ մը ղրկած էր: Առաջնորդ Սրբազան, Ս. Էջմիածինէն վերադարձին, Գանատական ծիական Խորհուրդները եւ պատգամաւորները ժողովի պիտի հրաւիրէր:

Ստացուած հրաւերներ եւ հանդիպումներ.-

Տարուայ ընթացքին ծիական Խորհուրդս հետեւեալ կազմակերպութիւններէ, իրենց ձեռնառկներուն ներկայ գտնուելու, հրաւերներ ստացաւ եւ ներկայացուցիչներ ղրկեց:

Գեղարուեստական ձեռնարկներ՝

Թէրէեան, Համագային եւ Նոր Սերունդ Մշակութային, Կոմիտաս Երաժշտական ու Մարաշցիներու Հայրենակցական Միութիւն.

Տարեդարձ՝

Հ.Յ.Դ.ի հիմնարկութեան 90ամեակ, Ս.Քաթրինսի Ս.Գրիգոր Լու-

սաւորիչ եկեղեցւոյ օժման յիսնամեակ, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ օժման 27րդ տարեդարձ եւ Համիլթօնի Ս. Մարիամ Աստուածածին ծուխին հաստատման հնգամեակ.

Հիմնադրութիւն՝

Հ. Բ. Ը. Մ. ի համալիրի շինութեան անկիւնաքարի գետեղման հանդիսութիւն.

Սեպտեմբերին, ծխական Խորհուրդս, Ս. Երրորդութիւն Հայց. եկեղեցւոյ ծխական Խորհուրդին հետ, զիրար ճանչնալու, սերտ յարաբերութիւններ մշակելու եւ անպաշտօն գետնի վրայ զաղափարի փոխանակութիւններու համար, հանդիպում մը ունեցաւ:

Ծխական Խորհուրդը, նոր Սերունդ Մշակութային Միութենէն, թեմական եւ եկեղեցական հարցերու առնչութեամբ տեսակցելու համար, նամակով մը, ժողովի հրաւեր ստացաւ: Նկատի ունենալով թէ՛ այս հարցերը մշակութային միութեան մը աշխատութեան սահմաններէն դուրս էին, հրաւերին չընթացանք: Սոյն միութեան վարչականները, որոյքս եկեղեցւոյս անդամ, անհատապէս ծխական Խորհուրդի ժողովին հրաւերեցին: Չեկան:

### Յարակից Մարմիններ

Ս. Խաչ Ազգային Ամենօրեայ Վարժարան. -

Գաղութիւն եւ ծուխիս պարձանք, յամայն Գանատայի առաջին ծխական ամենօրեայ վարժարանը՝ Ս. Խաչ Ազգային Ամենօրեայ Վարժարանը 1979-1980 կրդական տարեշրջանը յաջողութեամբ բոլորեց: Վարժարանիս հոգաբարձութիւնը՝ Ատենապետութեամբ անձնուէր Տօրթ. Նուպար Ալեանաքի, յաջողութեան իրագործման եւ նիւթականի ապահովման համար, ամէն ջանք ի գործ դրաւ:

1979-80 Տարեշրջանի վերջաւորութեան, հոգաբարձութեան անդամներէն Տիարք Մակար Գուգուեանի, ժիրայր Թորիկեանի եւ Կարօ Խապայեանի պաշտօնավարութեան շրջանը աւարտեցաւ:

Տիարք Մակար Գուգուեան եւ ժիրայր Թորիկեան անձնական բազմազբաղութեան պատճառաւ նախընտրեցին մնայուն պարտականութիւն չստանձնել: Ծխական Խորհուրդս, այս երկու ազնիւ եւ պատրաստակամ ազգայիններուն իր հրապարակային շնորհակալութիւնը կը յայտնէ:

Տիար Կարօ Խապայեան վերանշանակուեցաւ: Թափուր Բոնոնեանն նոր անձեր նշանակուեցան յանձինս Տիարք Կարպիս Թումսեանի, Գարնիկ Ճէօմէրթի եւ Յակոբ Մայտոսեանի:

1980-81 Դպրոցական տարեշրջանը, դարձեալ Տօրթ. Նուպար Ալեանաքի ատենապետութեամբ, սկսաւ աւելի վստահ ու խոստմնալից:

Այս տարուայ վերջաւորութեան, վարչութեան անդամներէն Տիար

Մարտիկ Տէմիրճեան, անձնական պատճառներով, հոգաբարձութեան կազմէն բաժնուեցաւ: Յատկապէս շնորհակալութիւն կը յայտնենք Պր. Տէմիրճեանի իր տարած աշխատանքին համար:

Պր. Գրիգոր Արգարազաշ նշանակուեցաւ հոգաբարձութեան անդամ: Վարժարանիս աշակերտութեան ուսումնական մակարդակը նախանձելի դիրքի մը հասած է, որուն համար շնորհակալութիւն կը յայտնենք Տնօրէնութեան եւ Ուսուցչական կազմին:

Կ' ուզենք շնորհակալութիւն յայտնել նաեւ համեստափայլ Տիկին Արուսեակ Ալեանարի, որ տիկիններու շղթայ մը կազմած է, անոնցմէ, ի նպաստ վարժարանի, հաւարելով քսանական տօլար:

Շնորհակալութիւն կը յայտնենք հոգաբարձութեան նախկին եւ այժմու բոլոր անդամներուն, նուիրատուներուն եւ բարերարներուն, որոնց շնորհիւ դպրոցը հաստատ քայլերով կը յառաջանայ:

#### Տիկնաց Օժանդակ Միութիւն. -

1978 եւ 1979 տարիներու ընթացքին կար կորիզ մը, որպէս Տիկնաց Օժանդակ Մարմին, նիւթապէս օժանդակելու միայն վարժարանիս:

Այս տարուայ սկիզբը, կազմուեցաւ Եկեղեցւոյ Տիկնաց Օժանդակ Միութիւնը, ընտրելով առժամեայ վարչութիւն մը: Նոյեմբերին տարւեան անդամական ժողովին ընտրուեցաւ նոր վարչութիւն մը:

Տիկնաց Օժանդակ Միութիւնը իր հասութեան ձեռնարկներով նիւթապէս կ' օժանդակէ թէ՛ վարժարանիս եւ թէ՛ Եկեղեցւոյ: Միութեան վարչութիւնը, տեղնապետութեամբ համեստափայլ Տիկին Նոյեմի Վէլէշեանի ղեկավարութեամբ զանձանակներ բաժնելով յաւելեալ եկամուտ մը ապահովելու զեղեցիկ զաղափարը յղացաւ:

Շնորհակալութիւն կը յայտնենք Ատենապետուհիին, վարչութեան եւ միութեան իւրաքանչիւր անդամուհիին, որոնք ոչ միայն իրենց հասութեան ձեռնարկները յաջողութեամբ կը պսակեն, նաեւ սիրով կ' օժանդակեն վարժարանիս հոգաբարձութեան, Մասիսի ու ծիական խորհուրդի ձեռնարկներուն եւ ամէն Կիրակի Ս. Պատարագէ վերջ, ներկայ հաւատացեալները կը հիւրասիրեն:

Շնորհակալութիւն բոլոր այն տիկիններուն որոնք Եկեղեցւոյ համար կղերականի շուրջառ մը կարեցին:

#### Դպրաց Դաս. -

1979 Օգոստոսին, Ս. Խաչ Եկեղեցւոյ Թեմական Ճանաչմամբ, կազմուեցաւ Դպրաց Դասը: նշանակուեցաւ առժամեայ վարչութիւն մը, ատենապետութեամբ Պր. Միհրան Գուգուեանի: Վեց ամիս յետոյ, անդամական առաջին ժողովին ընտրուեցաւ Ճանձերէ բաղկացեալ վարչութիւն մը: Պր. Նուրհան Իփէք ընտրուեցաւ տեղնապետ:

Կիրաց Դասը կը բաղկանայ երկու խումբերէ՝ արական եւ երկսեռ:  
Պր.Թագւոր Էվրէթիան ազնուօրէն ստանձնած է խումբը մարզելու եւ  
ղեկավարելու պարտականութիւնը: Իր բացակայութեան բարեշնորհ Մու-  
րատ Ա. Սարկաւազ Դարագաշ կը ղեկավարէ խումբը:

Մօտաւորապէս Ցամիսներէ ի վեր բաղաբազմ հաստատուած Օր. Աղաւնի  
Մերգիթուն, խումբին երգեհոնով սիրայօժար կ'ընկերակցի, նաեւ առա-  
կան խումբը հաւելեալ ժամերով կը մարզէ:

Եխական Խորհուրդս, Ս. Պատարագի հոգեպարար երգեցողութիւնը լա-  
ւազոյնս կատարելու իրենց տարած աշխատութեան համար, Պր. Թագւոր  
Էվրէթեանի, Օր. Աղաւնի Մերգիթունի, Կիրաց Դասի նախորդ եւ այժմու  
վարչութեանց եւ իւրաքանչիւր անդամին շնորհակալութիւն կը յայտ-  
նէ:

Յատուկ շնորհակալութիւն կը յայտնենք բարեշնորհ Աւագ Սար-  
կաւազներ եւ Սարկաւազներ Արամ Անուհուրի, Մուրատ Գարագաշի, Հայկ  
Միսաբեանի, Ղազարոս Պալճեանի եւ Տօրթ. Վահէ Սվաճեանի որոնք  
Ս. Սեղանին սպասարկեցին:

Քաջալերելի է սպասանի Յակոբ Պետրոսեանի Ս. Սեղանի սպասար-  
կելու փափաքը եւ յարատեւութիւնը:

Տարուայ ընթացքին, զանազան բարեպաշտ հաւատացեալներ, ի սոյ-  
ժառութիւն եկեղեցւոյ, նուիրեցին զանազան գոյքեր: Բոլորին շնոր-  
հակալութիւն կը յայտնենք:

Յառաջիկային, եթէ ուրիշներ ալ կը փափաքին նման նուիրատու-  
ութիւններ ընել, կը ինդրենք որ Հոգեւոր Հովիւ եւ Եխական Խոր-  
հուրդի հետ կանխաւ խորհրդակցին:

#### Եկեղեցւոյս Երիտասարդական Կազմակերպութիւնը.

Եխական Խորհուրդը, Եկեղեցւոյս Երիտասարդական կազմակերպու-  
թիւնը հիմնելու համար խնճոյրի երեկոյթ մը կազմակերպեց: Ասոր յա-  
ջորդեց, երիտասարդներուն կազմակերպուելու փափաքը: Նախ, մի բանի ե-  
րիտասարդներ, բով բովի գալով, անդամ արձանագրել սկսան: Աւելի վերջ,  
անդամական ժողով գումարեցին եւ վարչութիւն մը ընտրուեցաւ:

Կը Թելադրենք, որ իւրաքանչիւր ընտանիք քաջալերէ իր գաւակ-  
ները, որպէսզի անոնք երիտասարդաց կազմակերպութեան անդամակցին  
եւ աշխատութիւններու իրենց բաժինը բերեն:

Կը քաջալերենք Երիտասարդացի վարչութիւնը եւ իրենց յաջողու-  
թիւն կը մաղթենք:

#### Մասիս Մշակութային Ցանձնախումբ.

Եկեղեցին, Հայ ժողովուրդը իր շուրջ համախմբող, ամենակարե-

ւոր հաստատութիւնն է: Անոր պարտականութիւնը շահմանափակուելիք, միայն կրօնական գետնի վրայ, ժողովուրդին հոգեկան մխիթարութիւն տալով, կ'ընդարձակուի նաեւ ընկերային ու զեղարուեստական մարզերու վրայ ալ: Եկեղեցին պէտք է կեդրոնացնէ բոլոր աշխատութիւնները իր շուրջ, պահելու համար անհրաժեշտ միասնականութիւնը:

Այս հասկացողութեամբ, ծխական Խորհուրդը որոշեց կազմել Մասիս Աշակութային Յանձնախումբը, Եկեղեցւոյս միակ մշակութային կազմակերպութիւնը:

Տարուայ ընթացքին, Մասիս կազմակերպեց երեք ընկերային ձեռնարկներ, Յունուարին՝ նարտի ախոյանական երեկոյ, Փետրուարին՝ Բուն Բարեկենդանի պարահանդէս, 'Ինկտեմբերին՝ դարձեալ նարտի ախոյանական երեկոյ եւ երկու զեղարուեստական ձեռնարկներ, Սեպտեմբերին՝ արուեստագետ Պր. Խաչիկ Եազրճեանի գծագրութեանց ցուցադրութիւնը եւ Թատերական շարաթավերջ մը՝ Թորոնթոնայութեան ներկայացնելով Մոնթրէալի Արմենեա Թատերախումբը:

Մասիս, իր ձեռնարկներու հասոյթէն Ս. Խաչ վարժարանին նուիրեց 1000 տօլար:

Մասիս, կամագ սակայն ստոյր, պիտի ընդարձակէ իր աշխատութեան դաշտը: Անոնք, որոնք կր փառաբան իրենց տաղանդը եւ աշխատելու ուժը եւ կորովը, Եկեղեցւոյ այս յարակից մարմնոյն միջոցաւ ի յայտ բերել, կր հրաւիրենք միանալ Մասիսի:

Ծխական Խորհուրդը իր շնորհակալութիւնը կը յայտնէ Մասիսի վարչութեան եւ բոլոր անոնց, որոնք ձեռնարկներու յաջողութեան համար աշխատեցան եւ զայն քաջալերեցին:

#### Խորհրդածութիւններ.

Եկեղեցին միայն աղօթելու վայր մը չէ: Եթէ կ'ուզենք աղօթել, որեւէ տեղ, առանձին ալ կրնանք աղօթել: Հարցր առանձին աղօթել չէ, միասնաբար աղօթել է: Ս. Պատարագի մասնակցիլ է: Մարդիկ իրարու ներկայութեամբ կը գօրանան, կը տոգորուին: Մեր պարագային՝ Հայաստան-Եւրոպայի Եկեղեցին, ոչ միայն մեր ժողովուրդին հոգեկան մխիթարութիւն մատակարարող հաստատութիւն մըն է, այլ հայապահպանման դատին սատարող ու հայուն գոյատեւման պատճառ, ամենակենսական հաստատութիւնն է: Քաջալերեցէք Ձեր ընտանեկան անդամները, բարեկամները եւ նամանաւանդ երիտասարդութիւնը եկեղեցի յաճախել եւ Ս. Պատարագի մասնակցիլ:

Եկեղեցին ծառայելով ժողովուրդին, անոր վարչականներէն կը սպասուի բոլորը գոհացնող աշխատութիւն մը:

ծիական խորհուրդը, անցեալ տարուայ ընթացքին, իր կարելի-  
ութեան սահմաններուն մէջ, լաւագոյնը կատարել ջանաց: Անշուշտ,  
ամէն ինչ աւելի կատարելագործել միշտ կարելի է: Այս պատճառաւ  
ալ, վարչութիւն մը պէտք է քննադատութեան ենթարկուի: Քննադա-  
տութիւնները պէտք է ըլլան շինիչ, տեղին եւ ուղղեցոյց: Քննա-  
դատութիւնները պէտք է ըլլան ոչ միայն Անդամական ժողովի ընթաց-  
քին, այլ՝ որեւէ ատեն, երբ տակաւին սխալը սրբագրել ուշ չէ:

Մաղթելով Անդամական ժողովի աշխատութեանց յաջողութիւն՝

31 Դեկտեմբեր 1980

Արմէն Զիւրքճեան  
Ատենապետ



Տեղեկատուութիւն

Ս. Խաչ Հայց. Առար. Եկեղեցւոյ

Ս. Խաչ Ազգային Վարժարանի Հոգաբարձութեան

Ճանչնանք Ս. Խաչ Ազգ. Ամն. Վարժարանի Հոգաբարձութիւնը եւ Ուսուցչական կազմը.

Հոգաբարձութեան անդամներն են՝

Ատենապետ	Տօրթ.	Նուպար Ալեանաք
Փոխ Ատենապետ	Պրն.	Կարօ Խապայեան
Ատենադպիր	Տիկ.	Թեփոն Քէօշկերեան
Փոխ Ատենադպիր	Պրն.	Մուշեղ Շահնազար
Գանձապահ	Պրն.	Գառնիկ Ժէօմէրտ
Փոխ Գանձապահ	Պրն.	Յակոբ Մայտօսեան
Խորհրդական	Պրն.	Յովակիմ Օլթաճեան
՝՝	Պրն.	Կարպիս Թումայեան
՝՝	Պրն.	Գրիգոր Արքարաբաշ

Հոգաբարձութեան պարտականութիւնն է հայթայթել դպրոցին նիւթարարոյականը ծխական Խորհուրդի աջակցութեամբ:

1980-81 տարեշրջանի համար դպրոցին պիւտճէն նախատեսուած է 155,000.00 տուար: Ուրեմն Հոգաբարձութիւնը ոգի ի բոլին պիտի աշխատի որ այդ տուեալ գումարը հայթայթէ, կատարելով զանազան ձեռնարկներ, դիմելով բարեսիրական մեծ հաստատութեանց օգնութեան. ինչպէս Հ.Բ.Ր.Միութեան, Գալուստ Կիւլլէնկեան եւ Պապայեան Հաստատութեան, նուիրահաւաքով, բարերար անհատներու եւ ամէնէն կենսականը, Հայ ժողովուրդի բարիացակամ եւ լիառատ աջակցութեան:

Վերոյիշեալ այս բոլոր աշխատանքները կազմակերպուած կերպով առաջ տանելու համար, Հոգաբարձութիւնը գրեթէ ամէն շաբաթ ժողովներ կ'ունենայ դպրոցին մէջ:

Հոս, մեծ ուրախութեամբ կարելի է նշել թէ՛ ներկայ Հոգաբարձութեան բոլոր անդամները անսակարկօրէն նուիրուած են տուեալ գործին եւ զիտակից են իրենց վստահուած պարտականութեանց լի ու լի:

Դպրոցի մասին

